

Արևադաշտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի բնակչության առջև 2014թ-ի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարի կողմից 2014թ. հունվարի 7-ից մինչև հուլիսի 1-ը կատարած աշխատանքների մասին ներկայացված է 16.07.2014թ.

համայնքի ժողովում: /Ձեկ. համայնքի ղեկավար՝ Հ.Օհանյան/

Հարգելի Արևադաշտցիներ, հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Արևադաշտի Գյուղապետարանի և ավագանու կողմից 2014թ-ի հունվարի 7-ից մինչև հուլիսի 1-ը կատարած աշխատանքները:

Համայնքի խնդիրները լուծելու նպատակով, համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար, ավագանի:

Լսելով քննարկելով բնակիչներին հուզող բոլոր խնդիրները, միջոցներ ենք կիրառում դրանք լուծել ի օգուտ մեր բնակչությանը:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 5 ավագանու նիստ:

Պատասխանել ենք ստացվող բոլոր գրություններին և դիմումներին, համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 5 որոշում

և արձակվել է 5 կարգադրություն:

Գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով կատարվել է

համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվետվություն և ներկայացվել է վիճակագրական վարչություն:

Դրամական օգնություն է տրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է գարնանային գորահավաք: Զինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով զրույցներ, որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից: Նոր թաղամասի մուտքի գլխավոր գազատար խողովակների աշխատանքները ավարտված են, սակայն ընդունման և հանձնման գործընթացը չի կատարվել նրանց աշխատանքային թերությունների պատճառով:

Խմելաջրի նոր գիծ է անցկացվում դեպի Արևադաշտ Ասիական բանկի ֆինանսավորման շնորհիվ: Աշխատանքները դեռ ընթացքի մեջ են , որի ավարտից հետո ազգաբնակչությունը կունենա ամենօրյա խմելու ջուր՝ հաշվիչների առկայությամբ:

Ազգաբնակչության մի մասը արդեն մի քանի տարի է ինչ ոռոգման ջուր ունի, իսկ մյուս մասն էլ չունեն, այսօր մյուս մասի ոռոգման ջրագիծը պատրաստ է, սակայն Արմավիր ԶՕԸ դեռ պայմանագիր չի կնքել ինչ-ինչ պատճառներով: Շուտով բոլորն էլ ապահովված կլինեն ոռոգման ջրով: Մարզպետի միջամտությամբ Արևադաշտ համայնքում տեղադրվել է մեկ հակակարկտային կայան:

1-ին կիսամյակում գյուղապետարանը ոռոգման ջրով ապահովվելու նպատակով խորքային հորի վերանորոգման համար նախատեսել է 1000000 ՀՀ դրամ :

Համայնքի որոշ աշխատանքներ դանդաղ են իրականանում, դա այն պարզ պատճառով է, որ մեր համայնքի բնակիչները, ովքեր ունեն սեփականաշնորհված և միաժամանակ վարձակալական հիմունքներով վերցված հողատարածքներ, չեն ցանկանում ժամանակին կատարել վճարումներ: Այս ուղղությամբ կատարել ենք քայլեր, որ այսուհետև կկատարվեն բավարար քանակությամբ գանձումներ:

Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ, որի շնորհիվ գյուղապետարանի աշխատողները չունեն հողի հարկի պարտքեր: 1-ին կիսամյակի կտրվածքով հողի հարկի գումարը կազմում է՝ 87.3%, իսկ գույքահարկի գումարը կազմում է՝ 49.6%, տեղական տուրքերի գումարը կազմում է՝ 44.6% վարձակալական հողերի գումարը կազմում է՝ 8.7%:

Համայնքը ունի մի շարք խնդիրներ, որոնց նկատմամբ լուրջ ուշադրություն ենք դարձնում և հնարավորինս չափ պետք է արագացնել և միահամուռ ուժերով իրականացնել, թե ճանապարհաշինության մեջ, թե դպրոցի շենք ունենալու և մի շարք ուրիշ հիմնահարցեր իրականացնելու գործում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից բնակչությանը տրվել են տեղեկանքներ, քաղվածքներ, կատարվել են դիմումների քննարկումներ:

Արևադաշտ համայնքի եկամուտների կատարողականը

առ 07.01.2014թ. մինչև 01.07.2014թ.

- հողի հարկ 3708.5 դրամ
- գույքահարկ 64.5 դրամ
- վարձակալական հողերի վարձավճար 163.4դրամ
- դոտացիա 1895.1դրամ
- տեղական տուրքեր 15.6դրամ

Ծախսերի կատարողական

- գյուղապետարանի աշխատավարձ 3573.6 դրամ
- Սոց Օգնություն 400.0 դրամ
- Գործուղում և ծառայութ. վճար 80.0
- Էլ.էներգիայի գումար 60.0
- Տեղեկատվական ծառայություն 143.4
- Տրանսպորտային նյութեր 250.0
- Կապի ծառայություն 50.0
- Վարչական սարքավորումներ 100.0
- Համակարգչային ծառայություններ 74.4
- Շինությունների կառուցում 950.0
- Սարքավորումների ընթ. նորոգում 50.0

Կառավարչական ծառայություններ 180.0
Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող 150.0

Քարտուղարություն

07. Հունվարի 2014թ.-ից մինչև 1. հուլիսի 2014թ

Կայացել է ավագանու նիստ	Քաղաքացիներից ստացված և քննարկված դիմումների թիվը	Մուտք արված գրությունների թիվը	Ելք արված գրությունների թիվը	Տրված տեղեկանքների թիվը
5	20	66	44	77

Արևադաշտ համայնքի



ղեկավար

Հ.Օհանյան